Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 587 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ին բժշկական սարքավորումների նվիրաբերման նպատակով սարքավորումների ձեռքբերում և նվիրաբերում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ (ՀՀ, ք. Երևան, Արմենակ Արմենակյան փող., 153 շենք), առողջապահության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ (Հայաստան, 0047, Երևան, Արմենակ Արմենակյան փող., 153 շենք)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել բժշկական սարքավորումների ձեռքբերում և ներմուծում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ:

	ֆինանսական միջոցների ծավալը	Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայություն-ների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և ներմուծել բժշկական սարքավորումներ ու նվիրաբերել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ին: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թ.-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

26.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ